

## Սպառնալիք Կարօ Փայլանին



(Լուսանկարը – 12 Ապրիլ 2019՝ <https://www.yerepouni-news.com/2019/04/12/%D5%B0%D5%A1%D5%B5%D5%B8%D6%81-%D6%81%D5%A5%D5%B2%D5%A1%D5%BD%D5%BA%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%A5%D5%A1%D5%B6-%D5%A9%D5%A5%D5%B4%D5%A1%D5%B6-%D5%BA%D5%A7%D5%BF%D6%84-%D5%A7-%D5%A9%D5%B8%D6%82/>)

Ժողովուրդներու ժողովրդավարութեան կուսակցութեան ՀՏՓ-ի պատգամաւոր Կարօ Փայլան ինչպէս նախորդ տարիներ, այս տարի ալ Խորհրդարանի ամպիոնէն կոչ ուղղեց Թուրքիոյ Իշխանութեան պաշտօնապէս ճանչնալու համար հայոց ցեղասպանութիւնը: ԱՄՆ նախագահի ուղերձին մէջ ցեղասպանութիւն բառը գործածելով նիւթը ալ ասելի պէկոծած է Թուրքիոյ քաղաքական դաշտը: Իբր հետեւանք Փայլան կը հարկադրուի մասնակցելու զանազան հեռու ստահադրրդումներու, որոնց ընթացքին յստակօրէն կը ներկայացնէ իր կեցուածքը: Փայլան այդ

հաղորդումներէն մէկու ընթացքին դժգոհութիւն յայտնած էր ցեղասպանութեան գլխաւոր կազմակերպիչներու հերոսացումին դէմ: «Ման կու գանք Թալաղ Փաշայի անունը կրող փողոցներով կամ կ'ուսանինք անոր անունով կնքուած վարժարաններու մէջ: Մինչդեռ եթէ պատմութենէն հերոսներ պիտի փնտռենք կրնանք օրինակ բերել Լիճէի գաւառապետ Հիւսէյին Նէսիմի Պէյը, որ մերժած էր իրեն ուղղուած անմարդկային հրահանգները գործադրել: Ան իր այդ մարդասիրական վարքին համար դաժանօրէն սպաննուեցաւ Յատուկ Ծառայութեան - Թէշքիլաթը Մահուսա-ի ոճրագործներու ձեռամբ»: Փայալանի այս ելոյթը զայրոյթ պատճառած է Խորհրդարանի ազգայնապաշտ երեսփոխաններէն Իւմիթ Էօզտաղին: Ան անկիրթ ոճով «Թուիթըր»եան գրառում մը ունեցած ու հրապարակաւ սպառնացած է Կարօ Փայլանին ըսելով թէ ան ալ պիտի ապրի Թալաղի փորձը: Իւմիթ Էօզտաղի այս գրառումը մեծ ընդվզում յառաջացուցած է ժողովրդավարական շրջանակներու մէջ, որոնք իսկոյն յիշած են նաեւ Հրանդ Տինքի դէմ կատարուած մահափորձը եւ դիտել տուած, որ ինչքան վտանգաւոր հետեւանքներ կրնայ ունենալ նման թիրախաւորումները: Նոյն շրջանակները դատարանի միջոցաւ բողոք յայտնած են նաեւ Էօզտաղի դէմ: Սակայն նկատի ունենալով Թուրքիոյ Արդարադատական համակարգի համարեա ամբողջութեամբ են թարկուածութիւնը երկրի իշխանութեան հանդէպ, խիստ հաւանական է, որ Էօզտաղի սպառնական գրառումն ալ մեկնաբանուի իբրեւ խօսքի ազատութիւն: